ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ
ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 11

18 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2023թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 16 անդամներ:

Բացակա էին՝ Անուշ Ասատրյանը, Գեվորգ Բաբայանը, Արամ Գասպարյանը, Կարինե Թովմասյանը, Կարեն Կարապետյանը, Սայեն Հայրապետյանը, Մելիք Նազարյանը, Անի Նահապետյանը, Էլմիրա Ոսկանյանը, Նվարդ Սարգսյանը, Նաիրա Վանյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝
Վարդան Գաբրիելյան, Արմինե Կոստանյան, Տիգրան Բաբախանյան, Լեվոն Գրիգորյան, Ծովինար Գալստյան, Լուսինե Աստաբացյան, Հասմիկ Ավետիսյան, Զորիկ Գրիգորյան

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Դավիթ Համբարձումյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Վարդան Գաբրիելյանը

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՐԴԱՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ/

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի համաձայն **Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է.**

Հաստատել համայնքի ղեկավարի ներկայացրած Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանու 2023 թվականի հոկտեմբերի 18-ի հերթական նիստի օրակարգը.

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԻՆՆ ԱՄՍՎԱ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 298-Ն ՈՐՈՇՄԱՆԸ ԿԻՑ 1-ԻՆ, 2-ՐԴ, 3-ՐԴ ԵՎ 4-ՐԴ ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՎ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 30-Ն ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԵՎ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 06-Ի N108-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

6. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 15-Ի N83-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ, 2021 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 17-Ի N96-Ա ԵՎ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 19-Ի N134-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

7. ,,ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔԻ ԹԻՎ 5 ՄՍՈՒՐ-ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ,, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

8. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 15-Ի N 225-Ա ՈՐՈՇՄԱՆ 23-ՐԴ, 28-ՐԴ ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

9. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 15-Ի N 225-Ա ՈՐՈՇՄԱՆ 32-ՐԴ ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

10. ,,ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԱՇՏԱՎԱՆ ԳՅՈՒՂԻ ՄՍՈՒՐ-ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ,, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

11. ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՐԱՄԱՐԳ ԲՆԱԿԱՎԱՅՐԸ ՆԵՐԱՌՈՂ ԱՐԱՐԱՏ-1 ՀԱՄԱԿՑՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

12. ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՅՆԹԱՊ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

13. ՎԱՐԴԱՆ ՎԱՉԻԿԻ ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

14. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 05-Ի N 213-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

15. ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

16. ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

17. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ /ԱՐՈՏԱՎԱՅՐ/ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

18. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

19. ԿԱՆԱՉԱՊԱՏՄԱՆ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՏԱՐԱԾՔԸ ՄՐՑՈՒՅԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

20. ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

21. ՇԱՎԱՐՇ ԽԱՉԱՏՈՒՐԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՇԻՆՈՒԹՅԱՄԲ ԾԱՆՐԱԲԵՌՆՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՍԱՀՄԱՆԱԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

22. ԱՇՈՏ ՎԱՀԱՆԻ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՎ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ

23. ՆԱՐԵԿ ՀԱՄԼԵՏԻ ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՎ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ

24. ՍԻՄՈՆՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ ՀՈՂԱՄԱՍ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

25. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 29-Ի N162-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

26. ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

27. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 236-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԻՆՆ ԱՄՍՎԱ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

/ՁԵԿ. ԱՐՄԻՆԵ ԿՈՍՏԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի, 1-ին կետի, ,,Բյուջետային համակարգի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի 2023 թվականի բյուջեի ինն ամսվա կատարման արդյունքների վերաբերյալ համայնքի ղեկավարի հաղորդումը՝ (հաղորդումը կցվում է) **Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է.**

1.Ընդունել ի գիտություն Մասիս համայնքի 2023 թվականի բյուջեի ինն ամսվա կատարման արդյունքների վերաբերյալ հաղորդումը՝
ա/ եկամուտների կատարման գծով՝ համաձայն հավելված 1-ի:
բ/ ծախսերի կատարման գծով՝ համաձայն հավելված 2-ի:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 237-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 298-Ն ՈՐՈՇՄԱՆԸ ԿԻՑ 1-ԻՆ, 2-ՐԴ, 3-ՐԴ ԵՎ 4-ՐԴ ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՄԻՆԵ ԿՈՍՏԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, ,,Բյուջետային համակարգի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի և ,,Նորմատիվ իրավական ակտերի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջներով՝ **Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 23-ի ,,Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի 2023 թվականի բյուջեն հաստատելու մասին,, N 298-Ն որոշմանը կից 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ /հավելվածները կցվում են/:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 238-Ն/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՎ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 30-Ն ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԵՎ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՄԻՆԵ ԿՈՍՏԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 77-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներով, հիմք ընդունելով ֆինանսական բաժնի պետի զեկույցը (զեկույցը կցվում է)՝ **Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է.**

1. Հաստատել 2023 թվականի հունիսի 1-ից միչև 2023 թվականի սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ձեռք բերված հիմնական միջոցների հաշվառումը և բաշխումը գույքային հաշվառման փաստաթղթերում՝ համաձայն հավելված 1-ի:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 239-Ա/

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 06-Ի N108-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՐԴԱՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ/

Ղեկավարվելով ,,Նորմատիվ իրավական ակտերի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, հաշվի առնելով մշտական գործող հանձնաժողովի անդամների Էդվարդ Վարդանյանի 06.09.2023 թվականի մտից՝ 11484 և Անի Նահապետյանի 19.09.2023 թվականի մտից՝ 12085 դիմումները՝ աշխատանքային զբաղվածությունից ելնելով հանձնաժողովի անդամի լիազորություններից ազատելու մասին **Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է.**

1.Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանու 2022 թվականի հունիսի 06-ի N108-Ա որոշման 1-ին կետի 1.2 ենթակետում գրառված ,,Անի Նահապետյան,, բառերը փոխարինել ,,Արսեն Եղիազարյան,, բառերով, 1.3 ենթակետում գրառված ,,Էդվարդ Վարդանյան,, բառերը փոխարինել ,,Կարեն Կարապետյան,, բառերով:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 240-Ա/

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 15-Ի N83-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ, 2021 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 17-Ի N96-Ա ԵՎ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 19-Ի N134-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՏԻԳՐԱՆ ԲԱԲԱԽԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով ,,Նորմատիվ իրավական ակտերի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ մասով, 37-րդ հոդվածի 1-

ին մասով **Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է.**

1.**Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանու 2015 թվականի հոկտեմբերի 15-ի N83-Ա որոշման առաջին կետից հանել ,,ՀՀ Արարատի մարզի Մասիս քաղաքային համայնքի թիվ 5 մանկապարտեզ,, ՀՈԱԿ-ի , ,, բառերն ու կետադրական նշանները:**

2 ՈՒժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանու 2021 թվականի սեպտեմբերի 17-ի ,, ,,ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԻՎ 5 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ,, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ /ԱՆԺԱՄԿԵՏ/ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 15-Ի N83-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ,, **N96-Ա և 2021 թվականի հոկտեմբերի 19-ի** ,,ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 17-Ի N 96-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ,, **N134-Ա որոշումները:**

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 241-Ա/

Լսեցին

,,ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔԻ ԹԻՎ 5 ՄՍՈՒՐ-ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ,, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՏԻԳՐԱՆ ԲԱԲԱԽԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 685-րդ հոդվածի 1-ին մասով, 686-րդ հոդվածի 2-րդ մասով **Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է՝**

1.Թույլատրել ՀՀ Արարատի մարզի Մասիս համայնքի սեփականություն հանդիսացող՝ ՀՀ Արարատի մարզի Մասիս համայնք, ք. Մասիս, Մ. Հերացու փողոց 5 հասցեում գտնվող, 03-003-0107-0111-001 ծածկագիրը կրող 2488.1 քմ ընդհանուր մակերեսից 1930.25 քմ մակերեսով տարածքը կից հատակագծի համաձայն, անհատույց օգտագործման իրավունքով մեկ տարվա ընթացքում տրամադրել ,,ՀՀ Արարատի մարզի Մասիս համայնքի Մասիս քաղաքի թիվ 5 մսուր-մանկապարտեզ,, համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2023 թվականի հոկտեմբերի 19-ից:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 242-Ա/

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 15-Ի N 225-Ա ՈՐՈՇՄԱՆ 23-ՐԴ, 28-ՐԴ ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՏԻԳՐԱՆ ԲԱԲԱԽԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով ,,Նորմատիվ իրավական ակտերի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով՝ **Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է**

1.Մասիս համայնքի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 15-ի N 225-Ա որոշման 23-րդ, 28-րդ հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ /հավելվածները կցվում են/:

2. Հավելվածների փոփոխություններն ուժի մեջ են մտնում 2024 թվականի հունվարի 1-ից:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 243-Ա/

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 15-Ի N 225-Ա ՈՐՈՇՄԱՆ 32-ՐԴ ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՏԻԳՐԱՆ ԲԱԲԱԽԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով ,,Նորմատիվ իրավական ակտերի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ **Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է**

1.Մասիս համայնքի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 15-ի N 225-Ա որոշման 32-րդ հավելվածի 2-րդ կետի 6-րդ տողի ,,Հաստիքային միավոր,, սյունակում գրված՝ ,,8.5,, թիվը փոխարինել ,,9.3,, թվով և ,,Ընդամենը,, տողի ,,Հաստիքային միավոր,, սյունակում ,,12.5,, թիվը փոխարինել ,,13.3,, թվով :

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 244-Ա/

Լսեցին

,,ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԱՇՏԱՎԱՆ ԳՅՈՒՂԻ ՄՍՈՒՐ-ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ,, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՏԻԳՐԱՆ ԲԱԲԱԽԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով ,,Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ, 5-րդ մասերով, ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ, 28-րդ կետերով **Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է՝**

1.Ստեղծել ,,ՀՀ Արարատի մարզի Մասիս համայնքի Դաշտավան գյուղի մսուր-մանկապարտեզ,, համայնքային ոչ առևտրային կազմակերպություն

2.Սահմանել, որ ,,ՀՀ Արարատի մարզի Մասիս համայնքի Դաշտավան գյուղի մսուր-մանկապարտեզ,,, համայնքային ոչ առևտրային կազմակերպության գործունեության առարկան ու նպատակն է.

1)Հաստատության գործունեության առարկան յուրաքանչյուր սանի կրթության կազմակերպումն է նախադպրոցական կրթական ծրագրեր իրականացնելու միջոցով:

2)Հաստատության գործունեության նպատակը յուրաքանչյուր սանի, այդ թվում՝ կրթության և զարգացմ անառանձնահատուկ պայմանների կարիքունեցող, զարգացման առանձնահատկություններին համապատասխան կրթական գործընթացին առավելագույն մասնակցության ևնախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչով սահմանված արդյունքների ապահովումն է:

3)Հաստատության կրթական գործունեությունն իրականացվում է ի շահ անհատի, հասարակության և պետության:

4)Հաստատությունը, համագործակցելով համայնքի և ընտանիքի հետ, ապահովում է հաստատությունում ընդգրկված սաների ներդաշնակ զարգացումն ու դաստիարակությունը,
առողջության ամրապնդումն ու խնամքը, մայրենի լեզվով հաղորդակցվելու և դրա հիմքի վրա օտար լեզուների տիրապետման նախադրյալները,
հաշվելու տարրական կարողությունների զարգացումը,
վարվեցողության տարրական կանոններին, հայրենի բնության և բնապահպանության,

պատմության և ազգային մշակույթի տարրերին ծանոթացումը, երեխայի մտավոր, բարոյական, գեղագիտական և ֆիզիկական զարգացման հիմքերի ստեղծումը, հայրենիքի նկատմամբ սիրո և նվիրվածության զգացման ձևավորումը, աշխատանքային տարրական կարողությունների և հմտությունների ծանոթացումը, զարգացման շեղումների կանխարգելումն ու շտկումը, դպրոցական ուսուցման նախապատրաստումը:

5)Հաստատության գործունեությունը հիմնվում է ժողովրդավարության, մարդասիրության,
ներառականության, ազգային և համամարդկային արժեքների զուգորդման, անձի ազատ զարգացման, կրթության աշխարհիկ բնույթի սկզբունքների վրա:

6)Հաստատությունն իր գործունեությունն իրականացնում է նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչին, նախադպրոցական կրթական ծրագրերին, երեխաների տարիքային, ֆիզիոլոգիական և սոցիալ-հոգեբանական զարգացման առանձնահատկություններին,
հակումներին ու ընդունակություններին համապատասխան ուսուցման մեթոդների և ձևերի ընտրությամբ:

7)Հաստատության կրթական ծրագրերի ապահովման միջոցառումներում և ծառայություններում, որպես անբաժանելի մաս կարող են ներառվել՝

ա) հաստատության կողմից իրականացվող ուսումնամեթոդական, փորձարարական, հետազոտական աշխատանքները.

բ)
մանկավարժական աշխատողների մասնագիտական կատարելագործման միջոցառումները.

գ) սաների խնամքի, առողջության և անվտանգության պահպանման միջոցառումները՝ պահպանելով առողջապահության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած նորմերը.

դ)
սաների սննդի կազմակերպումը՝ պահպանելով առողջապահության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած նորմերը.

ե) սաների տրանսպորտային կազմակերպված փոխադրումները:

3.
Հաստատությունը կարող է իրականացնել ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները՝

1) լրացուցիչ կրթական, մարզաառողջարարական, ճամբարներում կազմակերպվող վճարովի ծառայություններ.

2) ստեղծել ռեսուրս-կենտրոններ՝ իրականացնել մասնագետների վերապատրաստման, խորհրդատվական դասընթացներ,
վարելծնողական կրթությանը միտված դասընթացներ և ծրագրեր.

3) կազմակերպել երեխայի տնային ուսուցում, դաստիարակություն և խնամք.

4) կազմակերպել ճկուն ռեժիմով երեխային սպասարկելու ծառայություններ.

5) կազմակերպել սաների երկարօրյա կամ շուրջօրյա ուսուցում և խնամք:

4.Հաստատել ,,ՀՀ Արարատի մարզի Մասիս համայնքի Դաշտավան գյուղի մսուր-մանկապարտեզ,, ՀՈԱԿ-ի կանոնադրությունը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2023 թվականի հոկտեմբերի 19-ից:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 245-Ա/

Լսեցին
ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՐԱՄԱՐԳ ԲՆԱԿԱՎԱՅՐԸ ՆԵՐԱՌՈՂ ԱՐԱՐԱՏ-1 ՀԱՄԱԿՑՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 9-րդ, 16-րդ մասերի պահանջներով և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված Հայաստանի Հանրապետության համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի թիվ 2/փ -293 եզրակացությունը և ՀՀ Արարատի մարզպետի գրությունը՝ /մտից ՝ 15.09.2023թ. N 11910/ ՝ **Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է.**

1. Հաստատել ՀՀ Արարատի մարզի, Մասիս համայնքի Նորամարգ բնակավայրը ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Արարատ-1 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի սույն փոփոխությունը՝

- ՀՀ Արարատի մարզի Մասիս համայնքի, Նորամարգ բնակավայրի վարչական տարածքում գտնվող, քաղաքացու սեփականություն հանդիսացող 03-068-0351-0005 կադաստրային ծածկագրով, 0.82հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության

արոտավայր հողատեսքի հողամասից 0.1 հա փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների նպատակային նշանակության գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողերի:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 246-Ա/

Լսեցին

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՅՆԹԱՊ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 9-րդ, 16-րդ մասերի պահանջներով և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N1064-Ա որոշմամբ ստեղծված Հայաստանի Հանրապետության համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի թիվ 2/փ -343 եզրակացությունը՝ **Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է.**

1.Հաստատել ՀՀ Արարատի մարզի, Մասիս համայնքի Այնթապ բնակավայրի գլխավոր հատակագծի սույն փոփոխությունը՝

- ՀՀ Արարատի մարզի Մասիս համայնքի, Այնթապ բնակավայրի վարչական տարածքում գտնվող, քաղաքացու սեփականություն հանդիսացող 03-012-0077-0034 կադաստրային ծածկագրով, 0.4հա մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական օբյեկտների նպատակային գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության հողամասը փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողերի:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 247-Ա/

Լսեցին

ՎԱՐԴԱՆ ՎԱՉԻԿԻ ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 9-րդ, 16-րդ մասերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի 1920-Ն որոշման պահանջներով և հաշվի առնելով Վարդան Քալանթարյանի դիմումը /հայտ՝ 29.08.2023թ. N 0001-1294/՝ **Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է.**

1. ՀՀ Արարատի մարզի, Մասիս համայնքի Արբաթ բնակավայրում գտնվող Վարդան Վաչիկի Քալանթարյանին սեփականության իրավունքով պատկանող 03-017-0113-0001 կադաստրային ծածկագիրը կրող, 0.4413 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության, վարելահող հողատեսքի հողամասը փոխել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական օբյեկտների նպատակային և գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության՝ ոռոգման նպատակով ջրավազան և պահեստ կառուցելու նպատակով:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 248-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 05-Ի N 213-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ/

Ղեկավարվելով ,,Նորմատիվ իրավական ակտերի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ **Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է.**

1.Մասիս համայնքի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 05-ի <<ԲԱՂԴԱՍԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> N 213-Ա որոշման 1-ին կետում գրառված ,,Հայանիստ,, բառը փոխարինել ,,Հովտաշատ,, բառով:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 249-Ա/

Լսեցին

ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ **Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է.**

1. Թույլատրել համայնքի ղեկավարին մեկ տարվա ընթացքում Մասիս համայնքի սեփականություն հանդիսացող ներքոնշյալ հողամասերն օտարել աճուրդ վաճառքի միջոցով.

1.1 ՀՀ, Արարատի մարզ, Մասիս համայնք, գյուղ Զորակ, Գ. Չաուշի փողոց, 9 հողամաս հասցեում գտնվող բնակավայրերի նպատակային բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 03-044-0006-0019 կադաստրային ծածկագրով, 0.0105 հա մակերեսով հողամասը, մեկնարկային գին սահմանել հողամասի կադաստրային արժեքի 100%-ի չափով, 1 -քմ ը 1221 ՀՀ դրամ,

1.2 ՀՀ, Արարատի մարզ, Մասիս համայնք, գյուղ Զորակ, Գ. Չաուշի փողոց, 4-րդ նրբանցք հողամաս հասցեում գտնվող բնակավայրերի նպատակային բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 03-044-0006-0020 կադաստրային ծածկագրով, 0.01 հա մակերեսով հողամասը, մեկնարկային գին սահմանել հողամասի կադաստրային արժեքի 100%-ի չափով, 1 -քմ ը 1221 ՀՀ դրամ,

1.3 ՀՀ, Արարատի մարզ, Մասիս համայնք, գյուղ Նոր Խարբերդ, 13-րդ փողոց, 46 հողամաս հասցեում գտնվող բնակավայրերի նպատակային բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 03-070-0071-0032 կադաստրային ծածկագրով, 0.0318 հա մակերեսով հողամասը, մեկնարկային գին սահմանել հողամասի կադաստրային արժեքի 100%-ի չափով, 1 -քմ ը 4442 ՀՀ դրամ,

1.4 ՀՀ, Արարատի մարզ, Մասիս համայնք, գյուղ Դարակերտ, Կենտրոնական փողոց, 2/10 հողամաս հասցեում գտնվող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական օբյեկտների նպատակային արդյունաբերական օբյեկտների գործառնական նշանակության 03-035-0117-0027 կադաստրային ծածկագրով, 0.01695 հա մակերեսով հողամասը, մեկնարկային գին սահմանել հողամասի կադաստրային արժեքի 150%-ի չափով, 1 -քմ ը 4332 ՀՀ դրամ,

1.5 ՀՀ, Արարատի մարզ, Մասիս համայնք, գյուղ Դարակերտ, Կենտրոնական փողոց, 2/9 հողամաս հասցեում գտնվող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական օբյեկտների նպատակային արդյունաբերական

օբյեկտների գործառնական նշանակության 03-035-0117-0026 կադաստրային ծածկագրով, 0.12605 հա մակերեսով հողամասը, մեկնարկային գին սահմանել հողամասի կադաստրային արժեքի 150%-ի չափով, 1 -քմ ը 4332 ՀՀ դրամ,

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 250-Ա/

Լսեցին

ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ՁԵԿ. ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ **Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է.**

1. Թույլատրել համայնքի ղեկավարին մեկ տարվա ընթացքում նշված հողամասերն օտարել աճուրդ վաճառքի միջոցով.

1.1 Մասիս համայնքի Նորաբաց բնակավայրում գտնվող 03-067-0034-0154 կադաստրային ծածկագրով, 0.58 հա գյուղատնտեսական նպատակային վարելահող գործառնական նշանակության հողամասը /վկայական N 15092023-03-0025/, մեկնարկային գին սահմանել հողամասի կադաստրային արժեքի 100%-ի չափով, 1766100 ՀՀ դրամ,

1.2 Մասիս համայնքի Սիփանիկ բնակավայրում գտնվող 03-085-0029-0011 կադաստրային ծածկագրով 2,0 հա գյուղատնտեսական նպատակային վարելահող հողատեսքի հողամասը /վկայական N 14092023-03-0081/, մեկնարկային գին սահմանել հողամասի կադաստրային արժեքի 100%-ի չափով, 1985000 ՀՀ դրամ,

1.3 Մասիս համայնքի Սիփանիկ բնակավայրում գտնվող 03-085-0029-0012 կադաստրային ծածկագրով 7,81961 հա գյուղատնտեսական նպատակային վարելահող հողատեսքի հողամասը /վկայական N 14092023-03-0004/, մեկնարկային գին սահմանել հողամասի կադաստրային արժեքի 100%-ի չափով, 7760963 ՀՀ դրամ,

1.4 Մասիս համայնքի Նոր Կյուրին բնակավայրում գտնվող 03-072-0259-0003 կադաստրային ծածկագրով 0,21339 հա գյուղատնտեսական նպատակային վարելահող հողատեսքի հողամասը /վկայական N 14092023-03-0109/, մեկնարկային գին սահմանել հողամասի կադաստրային արժեքի 100%-ի չափով,77888 ՀՀ դրամ,

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 251-Ա/

Լսեցին

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ /ԱՐՈՏԱՎԱՅՐ/ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 48-րդ հոդվածով, ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ **Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է.**

1. Թույլատրել համայնքի ղեկավարին մեկ տարվա ընթացքում Մասիս համայնքի Նորամարգ բնակավայրում գտնվող 03-068-0322-0003 կադաստրային ծածկագրով, 0.11119 հա գյուղատնտեսական նպատակային արոտավայր հողատեսքի հողամասը /վկայական N 11072023-03-0039/ տրամադրել վարձակալության մրցութային կարգով, մեկնարկային գին սահմանել հողամասի կադաստրային արժեքի 100%-ի չափով, 1 քմ-ը 5.75 ՀՀ դրամ:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 252-Ա/

Լսեցին

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 48-րդ հոդվածով, ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ **Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է.**

1. Թույլատրել համայնքի ղեկավարին մեկ տարվա ընթացքում Մասիս համայնքի ք.Մասիս Մ. Հերացու փողոց 17/3 հասցեում գտնվող, 03-003-0073-0216 կադաստրային ծածկագրով, 0.00176 հա հողամասը տրամադրել վարձակալության մրցութային կարգով, /վկայական N 23032023-03-0068/, մեկնարկային գին սահմանել հողամասի կադաստրային արժեքի 100%-ի չափով, 78.000 /յոթանասունութ հազար/ՀՀ դրամ:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 253-Ա/

Լսեցին
ԿԱՆԱՉԱՊԱՏՄԱՆ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՏԱՐԱԾՔԸ ՄՐՑՈՒՅԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ/

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով, հաշվի առնելով, որ նշված տարածքը գտնվում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերի ցանկում՝ **Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է.**

1.Թույլատրել Մասիս համայնքի ղեկավարին մեկ տարվա ընթացքում Մասիս համայնքի սեփականություն հանդիսացող՝ ՀՀ Արարատի մարզ Մասիս քաղաք Գ. Նժդեհի փողոց թիվ 24/24 հասցեում գտնվող 0,0275 հա մակերեսով /ծածկագիր 03-003-0138-0421/, բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը կանաչապատման և բարեկարգման նպատակով 50 տարի ժամկետով տրամադրել վարձակալության :

2. Մրցույթի մեկնարկային գին սահմանել 100.000 / հարյուր հազար/ ՀՀ դրամ:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 254-Ա/

Լսեցին

ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ մասով, 66-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով , հիմք ընդունելով Գրիգոր Դրաստամատի Ոսկանյանի դիմումը /մտից ՝ 08.12.2022թ. թիվ 7593/, Մասիսի քաղաքապետարանի և Գրիգոր Ոսկանյանի միջև 29.12.2005 թվականին կնքված վարձակալության պայմանագիրը և հաշվի առնելով, որ Մասիս համայնքի, Մասիս քաղաքի, Երիտասարդականների փողոց, 2-րդ նրբանցք 13 հողամաս հասցեում գտնվող 0,08 հա, ծածկագիր՝ 03-003-0298-0035, հողամասը չի հանդիսանում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամաս՝ **Հայաստանի Հնարապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է.**

Մասիս համայնքի սեփականություն հանդիսացող, Գրիգոր Դրաստամատի Ոսկանյանի կողմից վարձակալած՝ Մասիս համայնքի ք.
Մասիս, Երիտասարդականների փողոց, 2-րդ նրբանցք 13 հողամաս հասցեում գտնվող 0,08 հա բնակավայրերի հասարակական կառուցապատման նշանակության հողամասը /ծածկագիր՝ 03-003-0298-0035 վկայական N 20092023-03-0048/, թույլատրել տվյալ պահին գործող հողի կադաստրային 1 քմ-ը 4441,8 դրամ արժեքով՝ ընդհանուր 3.553440 ՀՀ դրամ գնման նախապատվության իրավունքով, մեկ տարվա ընթացքում ուղղակի վաճառքով օտարել Գրիգոր Ոսկանյանին՝ կառուցապատման նպատակով:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 255-Ա/

Լսեցին

ՇԱՎԱՐՇ ԽԱՉԱՏՈՒՐԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՇԻՆՈՒԹՅԱՄԲ ԾԱՆՐԱԲԵՌՆՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՍԱՀՄԱՆԱԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ/

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի թիվ 550-Ն որոշման պահանջները և հաշվի առնելով Շավարշ Խաչատուրի

Գևորգյանի դիմումը /մտից՝ 09.10.2023թ. թիվ 12968 /. **Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է.**

1.ՀՀ Արարատի մարզ Մասիս համայնք Արգավանդ բնակավայրի Պ. Սևակի փողոց 14/1 հասցեում 0,1105 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը /ծածկագիր՝ 03-018-0039-0163, սեփականության իրավունքի վկայական N 02102023-03-0065/, որը սահմանակից է Շավարշ Խաչատուրի Գևորգյանին սեփականության իրավունքով պատկանող /ծածկագիր՝ 03-018-0039-0043/ հողամասին և որը չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերի ցանկում, ընդլայնման նպատակով ուղղակի վաճառքով մեկ տարվա ընթացքում օտարել Շավարշ Խաչատուրի Գևորգյանին:

2.Հողամասի ուղղակի վաճառքի գինը կազմում է 11 617 970 / տասնմեկ միլիոն վեց հարյուր տասնյոթ հազար ինը հարյուր յոթանասուն / ՀՀ դրամ, 1 քմ-ի արժեքը 10514 /տաս հազար հինգ հարյուր տասնչորս/ ՀՀ դրամ:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 256-Ա/

Լսեցին

ԱՇՈՏ ՎԱՀԱՆԻ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՎ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 71-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներով և հաշվի առնելով քաղաքացի Աշոտ Վահանի Հակոբյանի դիմումը՝ /մտից՝ 08.09.2023թ թիվ 11585/՝ **Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է.**

1.Համաձայնություն տալ համայնքային սեփականություն հանդիսացող ՀՀ Արարատի մարզի, Մասիս համայնքի Մասիս քաղաքի Նոր թաղամաս 4-րդ փողոց 11/1 հասցեում գտնվող 03-003-0137-0726 ծածկագիրը կրող 0,041 հա հողամասի /սեփականության վկայական 07092023-03-0066/, ՀՀ Արարատի մարզի Մասիս համայնքի, Մասիս քաղաք Նոր թաղամաս 4-րդ փողոց 23 հասցեում գտնվող քաղաքացի Աշոտ Վահանի Հակոբյանի սեփականություն հանդիսացող 03-003-0137-0654 կադաստրային ծածկագրով, 0.041հա հողամասով փոխանակմանը:

Քվեարկության արդյունքով որոշումը չընդունվեց՝

Կողմ-0 Դեմ-12 Ձեռնպահ-4

Կողմ (0) Դեմ (12) Ձեռնպահ (4) Չի քվեարկել (0)

ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԱՐՏԱԿ
ԱՆՏՈՆՅԱՆ ՎԱՀԵ

ԱՎԱՆԵՍՅԱՆ ԱՐԹՈՒՐ
ԱՐԱՄԱՅԻՍՅԱՆ ԿԱՐԵՆ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԱՐՍԵՆ
ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ԱՐՄԱՆ
ՀԱԿՈԲՅԱՆ ՆՈՐԱՅՐ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ԱՐՏԱԿ
ՇԱԲՈՅԱՆ ԵՐԵՄ
ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐԴՈՒՀԻ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ԷԴՎԱՐԴ
ՕՀԱՆՋԱՆՅԱՆ ԵԼԻԶԱՎԵՏԱ

ԱՖՐԻԿՅԱՆ ՆՈՒՆԵ
ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ԴԱՎԻԹ

ՄԵՍՐՈՊՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ
ՕՍԵՅԱՆ ՁՈՀՐԱԲ

Լսեցին

ՆԱՐԵԿ ՀԱՄԼԵՏԻ ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՎ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 71-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներով և հաշվի առնելով քաղաքացի Նարեկ Համլետի Թադևոսյանի դիմումը՝ /մտից՝ 02.10.2023թ թիվ 12600/՝ **Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է.**

1.Համաձայնություն տալ համայնքային սեփականություն հանդիսացող ՀՀ Արարատի մարզի, Մասիս համայնքի Ջրահովիտ բնակավայրի 03-079-0031-0078, 03-079-0588-0002 ծածկագիրը կրող 0,285 հա, 0,30893 հա հողամասի փոխանակմանը /սեփականության վկայական 29092023-03-0074/, քաղաքացի Նարեկ Համլետի Թադևոսյանի սեփականություն հանդիսացող ՀՀ Արարատի մարզի Մասիս համայնքի, Ջրահովիտ բնակավայրի 03-079-0031-0077 կադաստրային ծածկագրով, 0.59393 հա մակերեսով հողամասով:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 257-Ա/

Լսեցին
ՍԻՄՈՆՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ ՀՈՂԱՄԱՍ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 605-րդ հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 5-ի N 1696-Ա որոշումը, ինչպես նաև Արարատի մարզպետ Ս. Թևոնյանի 09.10.2023թվականի N 01//05986-2023 գրությունը՝ **Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է.**

1. Արարատի մարզի Մասիս համայնքի Մասիս քաղաքի Հանրապետության փողոց 73/6 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.70815 հա բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասը անհատույց, սեփականության իրավունքով նվիրաբերությամբ տրամադրել Սիմոնյան կրթական հիմնադրամին , Սիմոնյան կրթական հիմնադրամի և Մասիսի համայնքապետարանի միջև 2022 թվականի հուլիսի 6-ին կնքված հուշագրի համաձայն Թումո կենտրոն կառուցելու նպատակով:

2. 10-օրյա ժամկետում կնքել նվիրաբերության պայմանագիր:

3. Մասիս համայնքի ղեկավարին պայմանագիրը կնքելու պահից երեք տարվա ընթացքում ծրագիրը չիրականացնելու դեպքում՝ լուծել նվիրաբերության պայմանագիրը, պայմանագիրը լուծելուց հետո հողամասը և դրա վրա առկա անշարժ գույքերը սեփականության իրավունքով հաշվառել համայնքի անշարժ գույքի հաշվեկշռում:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 258-Ա/

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 29-Ի N162-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԾՈՎԻՆԱՐ ԳԱԼՍՏՅԱՆ/

Ղեկավարվելով ,,Նորմատիվ իրավական ակտերի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 77-րդ հոդվածի 1-ին մասով **Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է.**

1.Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանու 2022 թվականի հուլիսի 29-ի N162-Ա որոշման 1-ին կետում գրառված ,,Մասիսի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի գլխավոր մասնագետ,, բառերը փոխարինել ,,Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիսի համայնքապետարանի փորձագետ-օպերատոր,, բառերով:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 259-Ա/

Լսեցին
ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼՈՒՍԻՆԵ ԱՍՏԱԲԱՑՅԱՆ/

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածի 1-ին մասով, 595-րդ հոդվածի 2-րդ մասով, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Զեփյուռ Գրիգորիսի Ավետիսյանը 1999 թվականից հաշվառված բնակվում է ներքոնշյալ հասցեում, նրա հետ համատեղ բնակվում է որդին՝ Գևորգ Սեդրակյանը հաշվառված 2011 թվականից, հարսը՝ Սվետլանա Գաբրիելյանը հաշվառված 2022 թվականից/հիմք՝ Արբաթ գյուղի վարչական ղեկավարի տեղեկանքը, անձնագրային բաժանմունքի տեղեկանքները,

վերջին քսան տարիների ընթացքում Հայաստանի Հանրապետության տարածքում ընտանիքի անդամների անվամբ որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ, վերջին քսան տարիների ընթացքում Հայաստանի Հանրապետության տարածքում կնքված անշարժ գույքի ձեռքբերման կամ օտարման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում կատարված չէ /հիմք՝ Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի 06.09.2023 թվականի ՆԱՏ-06092023-99-0063, ՆԱՏ-06092023-99-0072, ՆԱՏ-06092023-99-0084 տեղեկանքները/, հաշվի առնելով Արբաթ գյուղի վարչական ղեկավարի զեկուցագիրը /մտից՝ 10.10.2023 թ. թիվ 13049/ և ելնելով մարդասիրությունից **Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է՝**

1.Նվիրատվությամբ օտարել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի սեփականություն հանդիսացող Հայաստանի Հանրապետության Մասիս համայնքի Արբաթ գյուղի 4-րդ փողոց 19/2 հասցեում գտնվող անշարժ գույքը

/հողամասի կադաստրային ծածկագիր՝ 03-017-0010-0041, մակերեսի չափը՝ 0.01362 հա, նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման, շինության կադաստրային ծածկագիր՝ 03-017-0010-0041-001, տեսակը բնակելի տուն, մակերեսը՝ 41.8 քմ/Զեփյուռ Գրիգորիսի Ավետիսյանին /ծնված՝ 18.06.1957 թվականին, նույնականացման քարտի համարը՝004852422, տրված 13.11.2014 թվականին 044-ի կողմից/,Գևորգ Կնյազի Սեդրակյանին /ծնված՝ 18.07.1990 թվականին, անձնագիր՝ AR0287997, տրված՝ 11.05.2017 թվականին 044-ի կողմից / ևՍվետլանա Կամոյի Գաբրիելյանին /ծնված՝ 18.07.2002 թվականին, անձնագիր՝ AU0543139, տրված՝ 09.12.2021 թվականին 031-ի կողմից/:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 260-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՐԴԱՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ/

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասով, **Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանու հերթական նիստի օրը որոշել 2023 թվականի նոյեմբերի 20-ը:

Քվեարկության արդյունքում Ելիզավետա Օհանջանյանը առաջարկեց նիստի օրը և ժամը տեղափոխել, որի արդյունքում որոշվեց հերթական նիստի օրը որոշել 2023 թվականի նոյեմբերի 15-ին:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 261-Ա/

Ավագանու անդամներ

ԱՐՏԱԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

ՎԱՀԵ ԱՆՏՈՆՅԱՆ

ԱՐԹՈՒՐ ԱՎԱՆԵՍՅԱՆ

ԿԱՐԵՆ ԱՐԱՄԱՅԻՍՅԱՆ

ՆՈՒՆԵ ԱՖՐԻԿՅԱՆ

ԱՐՍԵՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԱՐՄԱՆ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ՆՈՐԱՅՐ ՀԱԿՈԲՅԱՆ

ԴԱՎԻԹ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ԿԱՐԱՊԵՏ ՄԵՍՐՈՊՅԱՆ

ԱՐՏԱԿ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ԵՐԵՄ ՇԱԲՈՅԱՆ

ՎԱՐԴՈՒՀԻ ՍԱՐԳՍՅԱՆ

ԷԴՎԱՐԴ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԵԼԻԶԱՎԵՏԱ ՕՀԱՆՋԱՆՅԱՆ

ԶՈՀՐԱԲ ՕՍԵՅԱՆ

Համայնքի ղեկավար

ԴԱՎԻԹ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ _____

Նիստն արձանագրեց՝

Վարդան Գաբրիելյանը _____

2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի
ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ
ՑՈՒՑԱԿ

2023 թվականի հոկտեմբերի 18-ի ավագանու հերթական նիստի

Հ/Հ	Ազգանուն	Անուն	Հայրանուն	Ստորագրություն
1	Համբարձումյան	Դավիթ	Միհրի	
2	Հակոբյան	Նորայր	Արեգի	
3	Եղիազարյան	Արսեն	Գագիկի	
4	Արամայիսյան	Կարեն	Գագիկի	
5	Օհանջանյան	Ելիզավետա	Գրիգորի	
6	Օսեյան	Զոհրաբ	Հայկի	
7	Կարապետյան	Կարեն	Բաբկենի	
8	Նահապետյան	Անի	Համլետի	
9	Շաբոյան	Երեմ	Մանվելի	
10	Ավանեսյան	Արթուր	Արկադիի	
11	Աֆրիկյան	Նունե	Ջանիբեկի	
12	Վարդանյան	Էդվարդ	Հրաչյայի	
13	Սարգսյան	Վարդուհի	Ռուբիկի	
14	Վանյան	Նաիրա	Մարտիկի	
15	Նազարյան	Մելիք	Դմիտրիի	
16	Սարգսյան	Նվարդ	Անդրանիկի	
17	Թադևոսյան	Արման	Աշոտի	
18	Գասպարյան	Արամ	Վլադիմիրի	
19	Ասատրյան	Անուշ	Ռոլիկի	
20	Բաբայան	Գևորգ	Միշայի	
21	Մուրադյան	Արտակ	Վեմիրի	
22	Ոսկանյան	Էլմիրա	Համլետի	
23	Անտոնյան	Վահե	Գագիկի	
24	Մեսրոպյան	Կարապետ	Բագրատի	
25	Թովմասյան	Կարինե	Գևորգի	
26	Անդրեասյան	Արտակ	Մեհրաբի	